

ՕՐՈՒԱՆ ԴԵՊՔԵՐԸ

ՄԻՇՏ ԿՈՒՒՆԵՐ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՈՒՐՋ

Երեքշաբթի, Օգոստոս 4-ին երբ կը խօսէինք Երեւանի հետ, Մարտակերտի դիրքերու կռիւները կը շարունակուէին, բայց, քաղաքը դեռ Ազրբեջանցիներու ձեռքը կը մնար:

Նախապէս, Օգոստոս 1-ին հայկական ինքնապաշտպանութեան ուժերը Մարտակերտի շրջանի Աղտարան Չորեքթար դիրքերու ազրբեջանական զինակէտերու դէմ դործողութիւններու ընթացքին փճացուցած են հինգ հրասայլ, երեք զրահակառք եւ չորս հրանօթ, իրենց հակողութեան ենթարկելով այդ դիրքերը: Ազրբեջանցիները մարդկային ուժի մեծ կորուստ տրուած են:

Նոյն օրը երեկոյին եւ կիրակիի առաջին ժամերուն օդէն ուժեղացած են Ստեփանակերտի Արմենաւան բնակելի զանգուածները եւ Շուշիի Ղայրալու եւ Այգաւան դիրքերը:

Հայաստանի Արցախէն երեսփոխաններէն Ռ. Քոչարեան վախ յայտնած է թէ շրջանին մէջ ռազմական դործողութիւնները կրնան ծաւալուիլ, որովհետեւ Ազրբեջան նոր ուժ ու մարտական թէքնիք կը կուտակէ, ընդլայնելով վարձկան զինւորներու հիմնարկը:

**

ՀՌՈՄԻ ԺՈՂՈՎԸ

Մինակի նախապատրաստական ժողովին որ սկսաւ Յուլիս 31-ին, Ֆրանսա, Միացեալ -- Նահանգներ, Իտալիա, Գերմանիա եւ Ռուսաստան հանդէս եկած են Մարտակերտի եւ Շահումեանի վրայ ազրբեջանական յարձակումներն ու խաղաղ բնակչութեան դէմ օդուժով ուժեղացող դատարարտող առանձին յայտարարութիւններով: Անոնք ընդգծած են որ իրենք համաձայն չեն դառնալիք կատարուած իրողութեան քաղաքականութեան եւ տարածքներու գրաւումին: Մասնակիցներուն ուղղուած Հայաստանի պատուիրակութեան յայտարարութեամբ երախտագիտութիւն յայտնուած է ազրբեջանական դործողութիւններու դատապարտումին, այն ակնկալութեամբ որ նման դիրքորոշում կը նպաստէ յետագային Ազրբեջանի գեկալարութեան յարձակողական ընթացքին գոպումին:

Օգոստոս 4-ին, Հոմի այս ժողովը կը շարունակուէր: Հայկական կողմը առաւելարար կ'ուզէր որ ժողովը պատրաստէ Մինակի հանդիպումը:

Ինչ կը վերաբերի կիրակի օրուան թուրք -- ազերի «ելոյթին», որուն մասին խօսած էինք երէկ, հետեւեալ մանրախօսած էինք երէկ, հետեւեալ մանրախօսած էինք երէկ, հետեւեալ մանրախօսած էինք: Ազերիներն մասնութիւններն այս առիթը: Ազերիները ձգած դացած են, երբ հաւաքու թուրքերը ձգած գացած են, երբ հաւաքու Առուշանեանը (Ղարաբաղի ներկայից Բաքու) ոտքի ելած էր ու առաջին բայցուցիչ) ոտքի ելած էր ու առաջին բայցուցիչ) ոտքի ելած էր: Առաքիւթիւնն այն ուրը կ'արտասանէր: Առաքիւթիւնն այն է որ Ղարաբաղի ներկայացուցիչը միայն է որ Ղարաբաղի ներկայացուցիչը նրատեալ շահատանքի յանձնարարութեան հարտապարտ են կրնայ արտայայտուիլ, ո՞չ լիակարտուն կրնայ արտայայտուիլ, ո՞չ լիակարտուն: Ռաֆայէլի ալ բացատրած է որ նրատը լիակատար չէր, այլ՝ աշխատանքի նիստ էր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԻՍՏԵՍԱ. - ՆԱՀԱՆԳՆԵՐՆ ալ հաստատուեցին թէ մահուան ճամբարներ կան

ԹՈՒՐԲ ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐԻՒՅԻՈՅ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ՈՒ ԿԱՐԳ ՄԸ ՀԱՐՑԵՐ

Հասան ծէմալ «Սապահ» թերթին մէջ կ'անդրադառնայ Եփրատի վրայ կատուցուած ամբարտակին բացումով յայտնուած ջուրի հարցին: Ան կը գրէ թէ թուրքի վարչապետին «Ինչպէս որ թուրքի արաբական քարիւղէն իրաւունք չի պահանջեր, դուք ալ չէք կրնար մեր ջուրէն իրաւունք ուզել» խօսքը լուրջ հակազդեցութեան տեղի տուած է յատկապէս սուրիական քաղաքական շրջանակներուն մէջ: Այս հակազդեցութիւնը մանաւանդ նկատուած է երբ թուրքի Սարաքին նախարարը Դամասկոս այցելութեան շատ անպատշաճ ձեւով զիմաւորուած է: Սուրիոյ Սարաքին նախարարութիւնը այս ընթացքին որպէս բացատրութիւն, հասկըցուցած է թէ Տէմիրէլի վերոյիշեալ խօսքերը մեկնաբանուած են որպէս Սուրիոյ ջուրին արդէլք ըլլալու մտադրութիւն ու զայրոյթ պատճառած:

Այս միջադէպէն մեկնելով Հասան ծէմալ կը խորհրդածէ թուրքի այնպիսի հարցական դիրքին ու անոր յարուցած անպատեհութիւններուն, հարցերուն մասին. անոնց շարքին Հայաստանի մասին կ'ըսէ. -- «Հանրապետութեան Նախագահ՝ Լեւոն Տէր - Պետրոսեանի պէտք է գորակցիլ, քէ ոչ: Եթէ ան իշխանութիւնը կորսնցնէ ու դաշնակցական մը գայ տեղը, աւելի գէշ չըլլա՞ր արդեօք: Դիւանագիտական յարաբերութեան հաստատումը Ղարաբաղով պայմանաւորուեցաւ: Լաւ, սակայն, ներկայիս շփումներու շարունակութիւնը Ադրբեջանի եւ Նախագահ Էլչիպէյի տեսանկիւնէն տեղի՞ն է: Օրինակ, Արտաֆին նախարարութեան կցորդի օգնական արագ դեսպան Պիլկին Ունանի գլխաւորութեամբ պատուիրակութեան մը յաջորդ շարքը Հայաստան մեկնումը լա՞ւ բան մըն է քէ գէշ?»:

Պոսնիա -- Հերզեկովին: Նախապէս Խըուածներու եւ մահամետականներու արդեւակալայաններու դոյուքեան մասին խօսած էին կարմիր խաչը եւ ՄԱԿ-ի զաղթականաց բարձր -- մարդկայնութիւնը: Մինչ շատեր անհրաժեշտ կը դառնն որ անմիջական միջամտութիւն մը ըլլայ, ՄԱԿ-ի ընդհ. քարտուղարը՝ Պուլթրոս Ղալի յայտարարած է անդլիական «Թիք Ինտելիլընտըմք» օրաթերթին. -- «Եուկոսլաւիա միջամտութիւն մը պիտի նշանակէր տեսակ մը վիճեմամ ՄԱԿ-ի համար»:

ԹՈՒՐԻՒՅԻՈՅ Նախարարաց Խորհուրդը քուէարկած է Նախիջեւանի մէջ հիւպատոսարան բանալու որոշում մը. հիւպատոսարանը կապուած պիտի ըլլայ Բաքուի թրքական ղեկավարության:

ԻՖՈՓԻ կատարած հարցախոյզի մը համաձայն, 57%-ի համեմատութեամբ «այո» է Ֆրանսացիներուն պատասխանը Մատթրիլիսի գաշնադրին:

ՄԻՇԷԼ Պէրժէ արդի երգի տաղանդաւոր յօրինողներէն, որ հեղինակն է Ճոնի Հալիտէի, Ֆրանսուազ Հարտի եւ մանաւանդ իր կնոջ՝ Ֆրանս Կալի երգերուն, զո՞հ գնաց սրտի տագնապի մը 44 տարեկանին իր ամարանոցը՝ Ռամաթիւէլ: Անցեալ փետրուարին է միայն որ կորսնցուցած էր իր հայրը հանրաժանօթ վիրարոյթ, երիկամունքի մասնազէտ՝ վիրոֆէսէօր ժան Համպլիւրթէրը: